# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 04.09.2019թ. թիվ 1 նիստի

# ՕՐԱԿԱՐԳ

1. 2019– 2020 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. 2019– 2020 ուս. տարվա դասաբաշխման հաստատում:
3. 2019–2020 ուս. տարվա էլեկտրոնային առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:
4. Սփյուռքի ուսանողների անգլերեն լեզվի ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում:
5. 2019–2020 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում:
6. Անգլերեն լեզվի հեռակա ուսուցման բաժնի ընդունելության քննության նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:
7. 2019–2020 ուս. տարվա ռոմանագերմանական լեզուների ամբիոնի հերթապահությունների գրաֆիկի հաստատում:
8. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ. պրոֆեսոր Ե.Ս. Մխիթարյանը

**1. ԼՍԵՑԻՆ-** 2019– 2020 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը: Բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Ս. Մխիթարյանը ներկայացրեց 2019-2020 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., , բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասրյանը, բ. գ. թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը, Ն. Հայրապետյանը և Ս. Դավթյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2019-2020 ուս. տարվա ռոմանագերմանական լեզուների ամբիոնի աշխատանքային պլանը:

**2.ԼՍԵՑԻՆ-** 2019– 2020 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը ներկայացրեց 2019-2020 ուս. տարվա դասաբաշխման ամփոփ պատկերը՝ նշելով, որ նախորդ ուսումնական տարվա համեմատ ամբիոնի այս տարվա հաստիքաչափը նվազել է 2.75 դրույքով: Անգլիական բաժնի բակալավրիատում բացվելու է 2 խումբ, իսկ 1-ը՝ մագիստրատուրայում, իսկ գերմանական բաժնի բակալավրիատում 1 խումբ, և ևս 1-ը՝ մագիստրատուրայում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2019-2020 ուս. տարվա դասաբաշխումը:

**3. ԼՍԵՑԻՆ-** 2019–2020 ուս. տարվա էլեկտրոնային առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց դասախոսներին, որ մինչև սեպտեմբերի 13-ը 1-ին կիսամյակի առարկաների վերահաստատված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները տեղադրեն Google Classroom էլեկտրոնային հարթակում:

Google Classroom էլեկտրոնային հարթակի մագիստրատուրայում իրականացվող դասընթացների պատասխանատու նշանակվեց բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, իսկ

բակալավրիատում իրականացվող դասընթացների պատասխանատու նշանակվեց դասախոս Ս. Սարգսյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ա. Պետրոսյանը, Ջ. Աղաջանյանը և Ս. Սարգսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2019–2020 ուս. տարվա էլեկտրոնային առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, նշանակել մագիստրատուրայում և բակալավրիատում իրականացվող էլեկտրոնային դասընթացների պատասխանատուներ:

**4. ԼՍԵՑԻՆ-** Սփյուռքի ուսանողների անգլերեն լեզվի ընդունելության քննությունների արդյունքների ամփոփման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց, որ ընդունվել են 6 ուսանողներ, որոնք շատ թույլ են: Մխիթարյանը հորդորեց դասախոսներին պահել նրանց հատուկ ուշադրության կենտրոնում և իրականացնել լրացուցիչ պարապմունքներ հերթապահության ժամանակ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը, Ն. Հայրապետյանը և Ս. Դավթյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Սփյուռքի ուսանողների անգլերեն լեզվի ընդունելության քննությունների արդյունքների ամփոփման հարցը համարել բավարար:

**5.ԼՍԵՑԻՆ-** 2019–2020 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց դասախոսներին, որ ներկայացնեն մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Որոշակի շտկումներից հետո հաստատել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

**6.ԼՍԵՑԻՆ-** Անգլերեն լեզվի հեռակա ուսուցման բաժնի ընդունելության քննության նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց, որ կազմվել են տոմսեր հեռակա բաժնի ընդունելության քննության համար, որը տեղի է ունենալու հոկտեմբերի 5-ին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Անգլերեն լեզվի հեռակա ուսուցման բաժնի ընդունելության քննության նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը համարել բավարար:

**7.ԼՍԵՑԻՆ-** 2019–2020 ուս. տարվա ռոմանագերմանական լեզուների ամբիոնի հերթապահությունների գրաֆիկի հաստատման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը ներկայացրեց հետևյալ գրաֆիկը՝

| 1/ 3 շաբաթ | | |
|---|---|---|
| Օր | 1-ին հերթ (09:00-13:00) | 2-րդ հերթ (13:00 -17:00) |
| Երկուշաբթի | Խաչատրյան Ռուզան | Մուրադյան Մարիետա |
| Երեքշաբթի | Սարգսյան Սաթենիկ | Հովհաննիսյան Գայանե |
| Չորեքշաբթի | Ստեփանյան Մարիանա | Պետրոսյան Ամալյա |
| Հինգշաբթի | Կարապետյան Սիրարփի | Աղաջանյան Զարուհի |
| Ուրբաթ | Դավթյան Սուսաննա | Քեռյան Անի |
| 2/ 4շաբաթ | | |
| | 1-ին հերթ (09:00-13:00) | 2-րդ հերթ (13:00 -17:00) |
| Երկուշաբթի | Աթոյան Կարինե | Թորոսյան Լիանա |
| Երեքշաբթի | Բաղդասարյան Սուսաննա | Սահակյան Անի |
| Չորեքշաբթի | Կարապետյան Միրա | Մաթևոսյան Թամարա |
| Հինգշաբթի | Հայրապետյան Նուշիկ | Ղազարյան Լիլյա |
| Ուրբաթ | Ասատրյան Ռուզաննա | Մելիքյան Գոհար |

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը, Ն. Հայրապետյանը, Ս. Դավթյանը, Լ. Ղազարյանը, Զ. Աղաջանյանը, Մ. Կարապետյանը, Գ. Հովհաննիսյանը և Ա. Պետրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** –Հաստատել 2019–2020 ուս. տարվա ռոմանագերմանական լեզուների ամբիոնի հերթապահությունների գրաֆիկը:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի

վարիչի պաշտոնակատար՝ Ե. Ս. Մխիթարյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 08.10.2019թ. թիվ 2 նիստի

# ՕՐԱԿԱՐԳ

1.Մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի ընթացիկ վիճակի հաղորդում
2.Առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերի և քննական տոմսերի հաստատում
3.Ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների գրաֆիկի հաստատում
4.Google Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման պատասխանատուների հաշվետվություն
5.Ռ. Ասատրյանի "Text Interpretation for Students of Pedagogy" ձեռնարկի քննարկում և երաշխավորում
6.Ընթացիկ հարցեր

**Սեմինար**
**Թեմա՝ «Հեմինգուեյի և Սարոյանի ստեղծագործությունները ուսանողների աչքերով»**
**Զեկուցող՝ Ռ. Ասատրյան**

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար,

բ.գ.թ. պրոֆեսոր Ե.Ս. Մխիթարյանը

**1.ԼՍԵՑԻՆ-** Հաղորդում մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի ընթացիկ վիճակի վերաբերյալ:

Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց, որ ղեկավարում է 3 ուսանողների մագիստրոսական թեզեր, և ուսանողներից 2-ը արդեն ավարտել են աշխատանքների տեսական հատվածները: Բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց, որ 3 ուսանողներից 2-ը գրեթե ամբողջությամբ պատրաստել են թեզերի առաջին գլուխները և շատ հետաքրքրված են թեմաներով: Բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը նշեց, որ ղեկավարում է 4 ուսանողների և դեռևս աշխատում են տեսական մասերի վրա: Բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը և բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը նշեցին, որ ղեկավարում են 1-ական ուսանողների մագիստրոսական թեզեր և աշխատում են թե՛ տեսական, թե՛ գործնական մասերի վրա:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը և բ.գ.թ., դոցենտ Գ. Սավոյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ավելի հետևողական լինել մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նկատմամբ և մինչև հոկտեմբեր ամսվա վերջը ավարտել աշխատանքների տեսական հատվածները: Որոշեցին մագիստրոսական թեզերի ընթացիկ վիճակը գնահատել բավարար:

**2.ԼՍԵՑԻՆ-** Առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերի և քննական տոմսերի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, դասախոսներ՝ Գ. Հովհաննիսյանը, Ս. Սարգսյանը, Ջ. Աղաջանյանը և Մ. Կարապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը և քննական տոմսերը:

**3.ԼՍԵՑԻՆ-** Ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը: Պրոֆեսոր Մխիթարյանը ներկայացրեց հետևյալ գրաֆիկը և նշեց, որ ամբիոնի վարիչի դասալսումներից բացի, պետք է նաև իրականացվեն փոխադարձ դասալսումներ:

## Անգլերեն լեզու և գրականություն

| Դասախոս | Ամիս |
|---|---|
| Քեռյան Ա. | Հոկտեմբերի 25 |
| Թորոսյան Լ. | Հոկտեմբեր |
| Դավթյան Ս. | Հոկտեմբեր |
| Սարգսյան Ս. | Հոկտեմբեր |
| Կարապետյան Ս. | Նոյեմբեր |
| Բաղդասարյան Ս. | Նոյեմբեր |
| Խաչատրյան Ռ. | Նոյեմբեր |
| Մաթևոսյան Թ. | Նոյեմբեր |

## Գերմաներեն լեզու և գրականություն

| Դասախոս | Ամիս |
|---|---|
| Ղազարյան Լ. | Հոկտեմբեր |
| Պետրոսյան Ա. | Հոկտեմբեր |
| Ստեփանյան Մ. | Նոյեմբեր |
| Աթոյան Կ. | Նոյեմբեր |

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Սավոյանը, դասախոսներ՝ Գ. Հովհաննիսյանը և Ս. Սարգսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների գրաֆիկը:

**4. ԼՍԵՑԻՆ** - Google Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման պատասխանատուների հաշվետվությունը:

Մագիստրատուրայում իրականացվող դասընթացների պատասխանատու դասախոս Ս. Սարգսյանը հայտնեց, որ դասախոսների ակտիվությունը Google Classroom հարթակում ընդհանուր առմամբ գոհացուցիչ է: Առանձին դեպքերում բացակայում են հարցաշարեր և գնահատվող առաջադրանքներ:

Բակալավրիատում իրականացվող դասընթացների պատասխանատու բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց, որ չնայած որոշ բացթողումների՝ արդյունքները գոհացուցիչ են և հավելեց, որ դասախոսները պետք է աշխատեն շտկել այդ թերությունները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, դասախոսներ՝ Գ. Հովհաննիսյանը, Ս. Սարգսյանը, Զ. Աղաջանյանը և Մ. Կարապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Google Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման պատասխանատուների հաշվետվությունը համարել բավարար:

**5. ԼՍԵՑԻՆ** - Ռ. Ասատրյանի “Text Interpretation for Students of Pedagogy” ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ. Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

Նշվեց, որ ուշագրավ է  հատկապես բազմաբնույթ վարժությունների շարքը, որտեղ ներառված են առաջին հերթին ոճագիտությանն առնչվող, ապա՝ թարգմանական և վերլուծական բազմաբնույթ վարժությունների տեսակներ, որտեղ հատկապես պետք է առանձնացնել ոճագիտական հիմնական եզրույթներն ու արտահայտությունները լուսաբանող տեղադրման վարժությունների շարքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ռ. Ասատրյանի “Text Interpretation for Students of Pedagogy” ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Նիստի նախագահ՝ Ե. Ս. Մխիթարյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

08. 10.19թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 14.11.2019թ. թիվ 3 նիստի

# ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքների ամփոփում:
2. Ամբիոնի վարիչի և փոխադարձ դասալսումների արդյունքների ամփոփում:
3. Առաջին միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

**Սեմինար**
**Թեմա՝ «Գերմաներենի և ռուսերենի քերականական սեռի զարգացումը»**
**Զեկուցող՝ Գ. Սավոյան**

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ. պրոֆեսոր Ե.Ս. Մխիթարյանը

1.ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքների ամփոփում:

Պրոֆեսոր Մխիթարյանը հայտնեց, որ մագիստրատուրա 2-րդ կուրսում ուսանողները հիմնականում հաջողությամբ կարողացան հաղթահարել ստուգումը, թեև կային մի քանի ուսանողներ, որոնց աշխատանքները բավարար վիճակում չէին և հորդորեց գիտական ղեկավարներին ավելի հետևողական լինել: Մխիթարյանը նշեց նաև, որ մինչև փետրվարի 10-ը պետք է պատրաստ լինեն աշխատանքների 2-րդ և 3-րդ գլուխների նախնական տարբերակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչի և փոխադարձ դասալսումների արդյունքների ամփոփման հարցը:

Բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը հայտնեց, որ իրականացրել է դասալսումներ դասախոսներ Ս. Սարգսյանի, Լ. Թորոսյանի, Ռ. Ասատրյանի և Ա. Քեռյանի մոտ: Պրոֆեսոր Մխիթարյանը նշեց, որ ընդհանուր առմամբ դրական տպավորություն է ստացել դասալսումներից և հատկապես առանձնացրեց Ս. Սարգսյանին և Ա. Քեռյանին: Նշվեցին նաև որոշ թույլ կողմեր, որոնց մասին առանձին խոսվել էր դասախոսների հետ:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը և մյուս դասախոսները նշեցին, որ դասալսումները ընթացքի մեջ են և արդյունքները կզեկուցեն դեկտեմբեր ամսին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը:

**3. ԼՍԵՑԻՆ**- Առաջին  միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփման հարցը:
Առաջին միջանկյալ ստուգումների արդյունքների վերաբերյալ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսները հաշվետվություններ ներկայացրեցին, համաձայն որոնց, գրեթե բոլոր կուրսերում արդյունքները բավարար էին, թեև նշվեց, որ կան մի քանի թույլ  ուսանողներ, որոնք անբավարար գնահատականներ են ստացել:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը,  դասախոսներ՝ Ա. Պետրոսյանը, Ն. Հայրապետյանը և Ջ. Աղաջանյանը:
**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ ստուգումների արդյունքները համարել բավարար, իսկ թույլ ուսանողների հետ վարել համապատասխան աշխատանք:

Նիստի նախագահ՝ Ե. Ս. Մխիթարյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

14.11.19թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 26.12.2019թ. թիվ 4 նիստի

## ՕՐԱԿԱՐԳ

1.Առաջին  կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփում

2.Ավարտական աշխատանքների հաշվետվությունների արդյունքների ամփոփում

3.Հաշվետվություն Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարած աշխատանքի մասին

4.Դասախոսների հաշվետվություն 2019 ուս. տարվա գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ

5. 2-րդ կիսամյակում նախատեսված դասախոսների վերապատրաստման թեմաների և գրաֆիկի քննարկում և հաստատում

6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար,

բ.գ.թ. պրոֆեսոր Ե.Ս. Մխիթարյանը

1.ԼՍԵՑԻՆ- Առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփման հարցը:

1-ին կիսամյակի 2-րդ միջանկյալ ստուգումների արդյունքների վերաբերյալ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսները հաշվետվություններ ներկայացրեցին, համաձայն որոնց գրեթե բոլոր կուրսերում արդյունքները բավարար են, թեև բակալավրիատի 1-ին կուրսի անգլիական բաժնում կան մի քանի թույլ ուսանողներ, որոնք անբավարար գնահատական են ստացել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը, դասախոսներ՝ Զ. Աղաջանյանը և Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգումների արդյունքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Ավարտական աշխատանքների հաշվետվությունների արդյունքների ամփոփման հարցը:

Պրոֆեսոր Մխիթարյանը նշեց, որ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների աշխատանքների միայն տեսական մասն է պատրաստ, որոշ աշխատանքներ բավարար չեն և մի քանի ուսանողներ չեն ներկայացել հաշվետվությանը:
Պրոֆ. Մխիթարյանը հորդորեց գիտական ղեկավարներին հունվար ամսից կազմել հանդիպումների գրաֆիկ, ավելի լավ աշխատել և ավելի հետևողական լինել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –- Ավարտական աշխատանքների հաշվետվությունների արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Հաշվետվություն Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարած աշխատանքի մասին:

Մագիստրատուրայում իրականացվող դասընթացների պատասխանատու դասախոս Ս. Սարգսյանը հայտնեց, որ ընդհանուր առմամբ դասախոսների կատարած

աշխատանքը Google Classroom էլեկտրոնային հարթակում զոհացուցիչ էր: Իսկ բակալավրիատում իրականացվող դասընթացների պատասխանատու բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց, որ չնայած որոշ բացթողումների՝ արդյունքները բավարար են, դասախոսներն ունեն շաբաթական ակտիվություն, բայց նշեց, որոշ դեպքերում բացակայում էին գնահատվող առաջադրանքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, դասախոսներ՝ Ս. Սարգսյանը, Մ. Մուրադյանը և Գ. Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Google Classroom էլեկտրոնային հարթակում իրականացված աշխատանքի արդյունքները համարել բավարար և հանձնարարել դասախոսներին շտկել բացթողումները:

**4. ԼՍԵՑԻՆ-** Դասախոսների հաշվետվություն 2019 ուս. տարվա գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ:

Պրոֆեսեր Մխիթարյանը հայտնեց, որ ունի 2 տպագրված հոդված և հրատարակվել է “English Theoretical Grammar” դասագիրքը: Մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանն ունի 1 տպագրված հոդված: Դասախոս Ա. Պետրոսյանը նշեց, որ պատրաստվում է ատենախոսության պաշտպանության: Դասախոսներ Ս. Սարգսյանը և Ս. Դավթյանը աշխատում են «Անգլերենի գրավոր խոսք» դասագրքի վրա: Բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը ունի 1 մեթոդական ձեռնարկ և 1 տպագրված հոդված: Դասախոս Մ. Մուրադյանը թարգմանել է գեղարվեստական գիրք: Բ.գ.թ. Ս. Կարապետյանի հոդվածը տպագրման փուլում է: Բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանի հոդվածը շուտով լույս կտեսնի, նաև աշխատում է գրքի վրա:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, դասախոսներ՝ Ս. Սարգսյանը, Ս. Դավթյանը, Ա. Պետրոսյանը և Մ. Մուրադյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –-** Դասախոսների հաշվետվությունները 2019 ուս. տարվա գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ համարել սահմանափակումով բավարար և հորդորեց թերացող դասախոսներին ակտիվորեն զբաղվել գիտամեթոդական աշխատանքով:

**5. ԼՍԵՑԻՆ-** 2-րդ կիսամյակում նախատեսված դասախոսների վերապատրաստման թեմաների և գրաֆիկի քննարկման և հաստատման հարցը:

Նշվեց, որ ԱՄՆ դեսպանատան կողմից հրավիրվել է դասախոս և նախատեսվում է դասախոսների վերապատրաստում: Ուղարկված թեմաների շարքից ընտրվել են հետևյալ 5 թեմաները՝

1. Media Literacy for Students in the Digital Age

2. Academic Integrity & Plagiarism: The Role of the Teacher

3. Low-Tech and High-Tech Vocabulary-Learning Tools

4. Critical Thinking Strategies for the Busy Teacher

5. Formative Assessments & Rubric Design

Դասերը տեղի կունենան փետրվարի 15-ից շաբաթական 1 օր, 1 ժամ տևողությամբ, իսկ դասընթացի վերջում տրվելու է դեսպանատան կողմից հաստատված վկայական:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Սավոյանը հավելեց, որ DAAD-ից 2 դասախոսներ անցկացնելու են դասընթացներ ուսանողների հետ:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի

վարիչի պաշտոնակատար՝ Ե. Ս. Մխիթարյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 30.01.2020թ. թիվ 5 նիստի

## ՕՐԱԿԱՐԳ

1. 2019–2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի էլեկտրոնային առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:
2. Միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերերի քննարկում և հաստատում:
3. Google Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրվող գնահատվող աշխատանքների քննարկում:
4. Հեռակա բաժնի կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
5. Ժաննա Այվազյանի «Անգլերենի և հայերենի մոտավոր քանակ /ոչ թվականով/ արտահայտող լեզվական միավորների զուգադրական վերլուծություն» հոդվածի քննարկում և երաշխավորում:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

**1. ԼՍԵՑԻՆ-** 2019–2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի էլեկտրոնային առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման հարցը: Դոցենտ Միքայելյանը հայտնեց դասախոսներին, որ մինչև փետրվարի 7-ը 2-րդ կիսամյակի առարկաների վերահաստատված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները տեղադրեն Google Classroom էլեկտրոնային հարթակում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2019–2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի էլեկտրոնային առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

**2. ԼՍԵՑԻՆ-** Միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերերի քննարկման և հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը, Ն. Հայրապետյանը և Ս. Դավթյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերերը:

**3. ԼՍԵՑԻՆ-** Google Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրվող գնահատվող աշխատանքների քննարկում:

Դոցենտ Միքայելյանը նշեց, որ կիսամյակում առնվազն 1 անգամ պետք է տեղադրել գնահատվող առաջադրանք Google Classroom էլեկտրոնային հարթակում և դրանից ստացված գնահատականը ներառել ընթացիկ ստուգման բաղադրիչում: Նշվեց նաև, որ գնահատվող առաջադրանքների բովանդակությունը և տեսակը նախօրոք պետք է քննարկվեն ամբիոնի նիստերում և բխեն ուսանողների հետաքրքրություններից:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, դասախոսներ Ա. Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Ս. Դավթյանը, Ն. Հայրապետյանը, Լ. Թորոսյանը և Մ. Կարապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Google Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրվող գնահատվող աշխատանքների քննարկման հարցը համարել բավարար:

**4.ԼՍԵՑԻՆ-** Հեռակա բաժնի կուրսային աշխատանքների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –-** Հաստատել հեռակա բաժնի կուրսային աշխատանքների թեմաները:

**5.ԼՍԵՑԻՆ** - Ժաննա Այվազյանի «Անգլերենի և հայերենի մոտավոր քանակ /ոչ թվականով/ արտահայտող լեզվական միավորների զուգադրական վերլուծություն» հոդվածի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը, մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

Նշվեց, որ հոդվածում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է մոտորակիչների այն կիրառությունները, որոնք երկու լեզվում էլ բավականին լայն տարածում ունեն: Հոդվածում առանձնացվել և քննության են առնվել մի խումբ կաղապարներ, որոնք բնորոշ են անգլերենին, իսկ հայերենում բացակայում են: Ուսումնասիրվել են նաև երկու լեզվի համար նույնական կաղապարներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ժաննա Այվազյանի «Անգլերենի և հայերենի մոտավոր քանակ /ոչ թվականով/ արտահայտող լեզվական միավորների զուգադրական վերլուծություն» հոդվածը երաշխավորել տպագրության:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի
վարիչի պաշտոնակատար՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 02.04.2020թ. թիվ 6 առցանց նիստի

## ՕՐԱԿԱՐԳ

1. Քննարկում Google Classroom էլեկտրոնային հարթակում Google Meet հավելվածով իրականացվող առցանց դասընթացների վերաբերյալ:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

**1.ԼՍԵՑԻՆ-** Քննարկում Google Classroom էլեկտրոնային հարթակում Google Meet հավելվածով իրականացվող առցանց դասընթացների վերաբերյալ:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց դասախոսներին, որ ելնելով համաճարակային իրավիճակից պետք է դասընթացները ըստ դասացուցակի իրականացնել Google Meet հավելվածով և հղումները տեղադրել էլեկտրոնային դասընթացներում: Տ. Միքայելյանը նշեց նաև, որ Google Meet հավելվածով իրականացված բոլոր դասերը պետք է ձայնագրվեն՝ ուսանողներն նախորոք դրա մասին տեղյակ պահելուց հետո: Նիստին ներկա էր նաև ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանը, որը ևս հանդես եկավ առաջարկություններով՝ առցանց դասընթացները ավելի արդյունավետ դարձնելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, դասախոսներ Ա. Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Ս. Դավթյանը, Ն. Հայրապետյանը և Մ. Կարապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Google Classroom էլեկտրոնային հարթակում Google Meet հավելվածով իրականացվող առցանց դասընթացների վերաբերյալ քննարկումը համարել բավարար և յուրաքանչյուր ուրբաթ օր ներկայացնել հաշվետվություն առցանց դասընթացների իրականացման գործընթացի վերաբերյալ:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի
վարիչի պաշտոնակատար՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 08.05.2020թ. թիվ 7 առցանց նիստի

## ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
2. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրախոսների նշանակում:
3. Մագիստրատուրա I կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի վերաբերյալ հաշվետվություն:
4. Մագիստրատուրա 1-ին կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում ու գնահատում:
5. Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքների քննարկում:
6. Մ.գ.թ. Ռուզան Խաչատրյանի «Հնչյունաբանության ուսուցումը մասնագիտական անգլերենի դասընթացում» մեթոդական ձեռնարկի քննարկում և տպագրության երաշխավորում:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ. դոցենտ Ս. Լուլուկյանը

1.ԼՍԵՑԻՆ- Հաշվետվություն մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ:
Բ.գ.թ, դոցենտ Գ. Մելիքյանը նշեց, որ մագիստրատուրա 2-րդ կուրսի «Ընտրովի դասընթաց»-ի շրջանակներում քննարկվել են մագիստրոսական թեզերը, կետ առ կետ ստուգվել են աշխատանքների տեխնիկական հատվածները և սահիկահանդեսները: Դասախոսները հավելեցին նաև, որ իրականացվել են ամենամսյա հաշվետվություններ և՛ մագիստրոսական թեզերի, և՛ ավարտական աշխատանքների վերաբերյալ, որոնց շնորհիվ բոլոր ուսանողների աշխատանքները և սահիկահանդեսները պատրաստ են պաշտպանության համար:
Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը հայտնեց, որ մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի պաշտպանությունը տեղի կունենա հանիսի 1-ին և 2-ին, և ուսանողներին կտրվի մինչև 15 րոպե թեզերը ներկայացնելու և հարցերին պատասխանելու համար, իսկ բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների պաշտպանությունը տեղի կունենա հանիսի 3-ին, 4-ին և 5-ին: Նրանց կտրվի 8-10 րոպե աշխատանքները ներկայացնելու և հարցերին պատասխանելու համար: Դոցենտ Լուլուկյանը նշեց նաև, որ հարկավոր է PDF տարբերակով ներկայացնել գրագողության տոկոսները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի և բակալավրիատ 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ- Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրախոսների նշանակման հարցը:
Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը նշանակեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրախոսներին, և հորդորեց նրանց ներկայացնել գրախոսության արդյունքները մինչև հունիսի 15-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս.

Բաղդասարյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը և Ս. Դավթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրախոսներին:

3.ԼՍԵՑԻՆ - Հաշվետվություն մագիստրատուրա I կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի վերաբերյալ:
Դասախոսները ներկայացրեցին մագիստրատուրա I կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի ընթացիկ վիճակը, իսկ մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը հայտնեց գիտական ղեկավարներին, որ ուսանողներին գնահատեն միայն հաշվետվություն ներկայացնելուց հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Մագիստրատուրա I կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի վերաբերյալ հաշվետվությունը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ - Մագիստրատուրա 1-ին կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման ու գնահատման հարցը:
Դասախոսները ներկայացրեցին մագիստրատուրա 1-ին կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքները:
Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը ներկայացրեց պրակտիկայի ավարտին պահանջվող փաստաթղթերը: Դրանք են՝

- Օրագիր
- 1-2 դասի վերլուծություն
- Ուսանողների հաշվետվություն իրականացված պրակտիկայի վերաբերյալ
- Ղեկավարի հաշվետվություն/բնութագիր՝ գնահատականով
- Դասալսման գրանցման թերթիկ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրա I կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման ու գնահատման հարցը համարել բավարար:

5.ԼՍԵՑԻՆ- Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքների քննարկման հարցը:
Դասախոսները ներկայացրեցին Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքների արդյունքները:
Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը հայտնեց դասախոսներին, որ ամեն ուրբաթ օր պետք է ուղարկեն շաբաթական հաշվետվություններ Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, դասախոսներ Ա. Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Ս. Դավթյանը, Ն. Հայրապետյանը և Մ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքների արդյունքները համարել բավարար:

6.ԼՍԵՑԻՆ – Մ.գ.թ. Ռուզան Խաչատրյանի «Հնչյունաբանության ուսուցումը մասնագիտական անգլերենի դասընթացում» մեթոդական ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.գ.թ. դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մ.գ.թ. Ռուզան Խաչատրյանի «Հնչյունաբանության ուսուցումը մասնագիտական անգլերենի դասընթացում» մեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի
վարիչի պաշտոնակատար՝ Ս. Վ. Լուլուկյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 29.06.2020թ. թիվ 8 առցանց նիստի

## ՕՐԱԿԱՐԳ

1. Օտար լեզուների ֆակուլտետի բակալավրի առկա, հեռակա ուսուցման, մագիստրատուրայի 2019-2020 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփում:
2. Օտար լեզուների ֆակուլտետի բակալավր առկա և մագիստրատուրա 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների քննարկում և ամփոփում:
3. Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսների 2019-2020 ուստարվա տարեկան աշխատանքների կատարման հաշվետվություն:
4. Մագիստրատուրա 1-ին կուրսի հետազոտական աշխատանքների ընթացքի մասին հաշվետվություն:
5. Ելենա Մխիթարյանի և Գոհար Մելիքյանի համահեղինակությամբ «Talking of Life Issues/ Զրույցներ կյանքի խնդիրների շուրջ/ Ուսումնական ձեռնարկ բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար» վերնագրով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ. դոցենտ Ս. Լուլուկյանը

**1.ԼՍԵՑԻՆ-** Օտար լեզուների ֆակուլտետի բակալավրի առկա, հեռակա ուսուցման, մագիստրատուրայի 2019-2020 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփման հարցը:

Մ.գ.թ. դոցենտ Ս. Լուլուկյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի պաշտպանությունը բավականին հաջող ընթացավ և ուսանողները կարողացան պատշաճ կերպով ներկայացնել կատարված աշխատանքները, իսկ բակալավրիատի առկա և հեռակա բաժինների ավարտական որոշ աշխատանքներում կային բովանդակային և տեխնիկական թերացումներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Օտար լեզուների ֆակուլտետի բակալավրի առկա, հեռակա ուսուցման, մագիստրատուրայի 2019-2020 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփման հարցը համարել բավարար:

**2.ԼՍԵՑԻՆ-** Օտար լեզուների ֆակուլտետի բակալավր առկա և մագիստրատուրա 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների քննարկման և ամփոփման հարցը:

Երկրորդ կիսամյակի 2-րդ միջանկյալ ստուգումների արդյունքների վերաբերյալ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսները հաշվետվություններ ներկայացրեցին, համաձայն որոնց, գրեթե բոլոր կուրսերում արդյունքները բավարար էին, թեև կան մի քանի թույլ ուսանողներ, ովքեր անբավարար գնահատականներ են ստացել:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. ասիստենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, դասախոսներ՝ Ս. Սարգսյանը, Ս. Դավթյանը, Ա. Պետրոսյանը և Ն. Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Օտար լեզուների ֆակուլտետի բակալավր առկա և մագիստրատուրա 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների քննարկման և ամփոփման հարցը համարել բավարար, իսկ թույլ ուսանողներին պահել հատուկ ուշադրության կենտրոնում:

3.ԼՍԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսների 2019-2020 ուստարվա տարեկան աշխատանքների կատարման հաշվետվության հարցը: Դասախոսները ներկայացրին տարվա ընթացքում կատարված գիտական աշխատանքները: Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը դասախոսների կատարած աշխատանքը ընդհանուր առմամբ գոհացուցիչ համարեց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոսների 2019-2020 ուստարվա տարեկան աշխատանքների կատարման հաշվետվության հարցը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ - Հաշվետվություն մագիստրատուրա 1-ին կուրսի հետազոտական աշխատանքների ընթացքի մասին:
Դասախոսները ներկայացրեցին մագիստրատուրա I կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի ընթացիկ վիճակը, ըստ որի արդյունքը գոհացուցիչ էր: Մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը հայտնեց գիտական ղեկավարներին, որ ուսանողներին գնահատեն միայն հաշվետվության հիման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս.

Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., ասիստենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ. Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1-ին կուրսի հետազոտական աշխատանքների ընթացքի մասին հաշվետվությունը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ - Ե. Մխիթարյանի և Գ.Մելիքյանի կազմած "Talking of Life Challenges"/ Զրույցներ կյանքի մարտահրավերների շուրջ/ ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ. դոցենտ Ս. Լուլուկյանը, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ. Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

Նշվեց, որ ձեռնարկը նպատակաուղղված է ուսանողների միջմշակութային և գործնական գիտելիքների զարգացմանը: Ձեռնարկի առավելություններից է տեքստերի պատշաճ ընտրությունը, ճիշտ հարցադրումները, հաշվի են առնվել ժամանակակից անգլերենին բնորոշ հաղորդակցական մտադրություններն ու դրանց լեզվական ձևավորման ձևերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ե. Մխիթարյանի և Գ.Մելիքյանի կազմած "Talking of Life Challenges"/ Զրույցներ կյանքի մարտահրավերների շուրջ/ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի
վարիչի պաշտոնակատար՝ Ս. Վ. Լուլուկյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան